Norwegian Ministry of Foreign Affairs

Մասնակցային և ներառական գործընթացները համայնքի զարգացման համատեքստում դասընթաց

Թեմա՝ Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

Դասընթացավար՝ Անուն Ազգանուն,
ՄԱԶԾ փորձագետ

«Դիմակայունություն բոլորի համար» ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ, Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ:

Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության էությունը

Մասնակցային կառավարման ողջ տրամաբանությունը տեղական մակարդակում որոշումների կայացման ժամանակ հասարակական կարծիքը, փորձը և գիտելիքները հաշվի առնելն է:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության առավելություններն ու օգուտները՝

- Հիմնախնդիրների առավել արդյունավետ լուծումներ
- Համայնքների թափանցիկ և հրապարակային գործունեության ապահովում
- Տեղական իշխանությունների նկատմամբ վստահություն
- Բնակիչների՝ սեփական կարծիքի արժևորում

Սոցիալական միասնականությունը՝ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության համատեքստում

ՄԱԶԾ-ն սոցիալական միասնականությունը դասակարգում է երկու հարթություններով՝

Ուղղահայաց սոցիալական միասնականություն
նկարագրում է բնակիչների և պետության կենտրոնական կառավարման մարմինների և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վստահության աստիճանը ինստիտուցիոնալ գործընթացների ժամանակ (օրինակ՝ ընտրություններ, արդարադատության, հանրային ծառայությունների հասանելիություն:

Հորիզոնական սոցիալական միասնականություն
նկարագրում է վստահության զգացումը, փոխհարաբերությունները և փոխազդեցությունը բնակիչների և հասարակության տարբեր խմբերի անդամների, կառույցների միջև և մասնակցության պատրաստակամությունը՝ հանուն ընդհանուր կայուն նպատակներին հասնելու:

Բնակիչների մասնակցության իրավական հիմքերը

- ՀՀ Սահմանադրություն
- ՏԻ եվրոպական խարտիայի ՏԻՄ-երի գործերին մասնակցելու իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրություն, 16.11.2009թ., Ուտրեխտ
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
- «Տեղական հանրաքվեների» մասին ՀՀ օրենք
- Այլ իրավական ակտեր

ՏԻՄ-երի հետ առնչությունների առումով իրենց մասնակցային դերի և հնարավորությունների մասին առավել տեղեկացված են տղամարդիկ:

ԱՂԲՅՈՒՐԸ ՄԱՋԾ ԿՈՂՄԻՑ 2020Թ. ՀՀ 6 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սահմանադրություն

Հոդված 48. Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը

ՏԻՄ-երի ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց՝ ՏԻՄ-երի ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

Հոդված 183. Համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցությունը

1. Համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով:
2. Տեղական հանրաքվեի անցկացման կարգը, ինչպես նաև համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու այլ եղանակները սահմանվում են օրենքով:



ՏԻ եվրոպական խարտիայի ՏԻՄ-երի գործերին մասնակցելու իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրություն, 16.11.2009թ, Ուտրեխտ

- Հոդված 1. ՏԻՄ-երի գործերին մասնակցելու իրավունքը
- Հոդված 2. Մասնակցելու իրավունքն ապահովող միջոցներ

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) վավերացրել է «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան» 2002թ.-ի հունվարին, իսկ դրա լրացուցիչ արձանագրությունը քաղաքացիների՝ տեղական ինքնակառավարմանմարմիններում մասնակցության իրավունքի մասին 2013 թ.-ի մայիսին:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված 8. ՏԻ սկզբունքները

- ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականություն, հրապարակայնություն ու թափանցիկություն
- ՏԻ-անը համայնքի բնակիչների մասնակցություն

Հոդված 11. Համայնքի բնակիչների մասնակցությունը ՏԻ-անը

Համայնքում տեղական ինքնակառավարմանը օրենքով սահմանված կարգով մասնակցելու իրավունք ունի տվյալ համայնքի 16 տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ: ՏԻ-անը բնակիչները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:
Համայնքի բնակիչների, նրանց խմբերի, տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ այլ օրենքներով, ինչպես նաև համայնքում ՏԻ-անը բնակիչների մասնակցության կարգով:

Հոդված 37. Համայնքի ղեկավարի լիազորությունները ՏԻ-անը բնակիչների մասնակցության բնագավառում (թվով 4 սեփական լիազորություններ)

Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնություն

2011թ.-ի հոկտեմբերին Հայաստանի կառավարությունը միացավԲաց կառավարման գործընկերությանը՝ հաստատելով բարձր մակարդակի Բաց կառավարման գործընկերության հռչակագիրը և այսպիսով հանձն առնելով«խթանել բաց կառավարման գլոբալ մշակույթ, որն իրավազորում է և արդյունքներ է ապահովում քաղաքացիների համար, առաջ է մղում 21-րդ դարի բաց և մասնակցային կառավարության իդեալները:

Հռչակագրի հիմնականսկզբունքներից մեկը քաղաքացիական մասնակցության սատարումն է:

«Մենք գնահատում ենք բոլոր մարդկանց՝ որոշումների կայացման և քաղաքականությունների ձևավորման գործում հանրային մասնակցությունը հավասարապես և առանց խտրականության: Հանրային ներգրավումը, այդ թվում՝կանանց լիաժեք մասնակցությունը, բարձրացնում է կառավարությունների արդյունավետությունը, ինչն օգտակար է ժողովրդի կողմից վերահսկողության համար անհրաժեշտ գիտելիքի, գաղափարների և կարողության տեսանկյունից: Մենք հանձնառու ենք քաղաքականության ձևակերպումը և որոշումների կայացումը դարձնել ավելի թափանցիկ՝ ստեղծելով և կիրառելով հանրության հետ հետադարձ կապն իրագործող միջոցներ և խորացնելով հանրային մասնակցությունը կառավարության գործունեության մշակմանը, մշտադիտարկմանը և գնահատմանը . . . »

Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնություն

Բաց կառավարման գործընկերություն - Հայաստան գործողությունների առաջին իսկ ծրագրից սկսած ստանձնած պարտավորությունների կատարման արդյունքում ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարվել են լրացումներ, որոնք միտված են օրենսդրորեն ամրապնդելու քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, բարձրացնելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը հրապարակայնությունը:

ԲԿԳ անդամ համայնքները՝ Վանաձոր, Գյումրի, Երևան, Արմավիր, Մեծամոր:

- **ԲԿԳ-Հայաստան գործողությունների 1-ին ծրագիր՝** ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնություն
- **ԲԿԳ-Հայաստան գործողությունների 2-րդ ծրագիր՝** SMS հաղորդագրությունների միջոցով համայնքային միկրոհարցումների իրականացում
- **ԲԿԳ-Հայաստան գործողությունների 3-րդ ծրագիր՝** ՏԻՄ-երի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հրապարակում միասնական էլեկտրոնային հարթակում
- **ԲԿԳ-Հայաստան գործողությունների 4-րդ ծրագիր՝** համայնքային կայքերի արդիականացում, տեղական մակարդակում հրապարակայնության, թափանցիկության և մասնակցայնության ամրապնդում
- **ԲԿԳ-Հայաստան 2022-2024թթ. գործողությունների 5-րդ ծրագիր՝** համայնքային մակարդակում «մասնակցային բյուջետավորման» մեխանիզմի ներդրման պարտավորություն

Կիրառման նպատակներից ելնելով՝ մասնակցային գործիքները և մոտեցումները դասակարգվում են հետևյալ խմբերով՝

- Տեղեկատվության տարածում և իրազեկության մակարդակի բարձրացում,
- Խնդիրների հատկորոշում և պլանավորում,
- Բնակչությունից գաղափարների և խնդիրների լուծման տարբերակների հավաքագրում,
- Մասնակցային որոշումների կայացում
- Մշտադիտարկման և ծառայությունների բարելավման կառուցակարգեր

Բնակիչների մասնակցության եղանակները

Ֆորմալ մասնակցություն

Ֆորմալ մասնակցությունը հնարավոր է օրենքով և կանոնակարգերով սահմանված հանրային մասնակցության կառուցակարգերի միջոցով:

Ոչ ֆորմալ մասնակցություն

Ոչ ֆորմալ մասնակցությունը օրենքով չի պահանջվում: Այնուամենայնիվ, այն կարևոր է որոշումների կայացման ժամանակ լեգիտիմության ավելի բարձր մակարդակի ապահովման համար և հանդես է գալիս որպես ավելի լավ համայնքային կառավարման և կյանքի որակի բարձրացման խթան: Ֆորմալ մասնակցության համեմատությամբ՝ այն ներառում է մեթոդների շատ ավելի լայն շրջանակ և ապահովում է որոշումների ավելի մեծ ճկունություն և ազատություն:

ՖՈՐՄԱԼ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
(Ակտիվ մասնակցության ձևեր)

1. մասնակցություն ավագանու նիստերին,
2. մասնակցություն ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին/հանդիպումներին,
3. հանրային բաց լսումներ և քննարկումներ,
4. հանրային ժողովներ և շահագրգիռ անձանց հետ հանդիպումներ,
5. հարցումների կազմակերպում և անցկացում,
6. ֆոկուս խմբերի ձևավորում,
7. համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորում,
8. բնակիչների նախաձեռնություն,
9. մասնակցային բյուջետավորում,
10. համայնքային ֆորմալ և ոչ ֆորմալ խմբեր,
11. տեղական ԶԼՄ-ներ, էլեկտրոնային և ինտերնետային միջոցներ,
12. համայնքի պաշտոնական համացանցային կայք

Ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություն և հանդիպումներ

«Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք» Հոդված 21.,

•Համայնքի ավագանու անդամը պարտավոր է՝ մասնակցել ավագանու կողմից անցկացվող՝ քաղաքացիների ընդունելություններին:
•Համայնքի ավագանու անդամը պարտավոր է՝ պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, համայնքի ընտրողներին տեղեկացնել համայնքի ավագանու աշխատանքների մասին.
•Համայնքի ավագանու անդամը պարտավոր է՝ օժանդակել համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանը.

«Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք» Հոդված 24.,
• Համայնքի ղեկավարը համայնքի բնակիչների ընդունելության, ինչպեսնաև հանրային հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու համարյուրաքանչյուր ամիս առնվազն մեկ օր կահավորված սենյակկամ դահլիճ է հատկացնում համայնքի ավագանու անդամին:

«Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք» Հոդված 33.,

•Աշխատակազմի քարտուղարը կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանցհանրագրերի, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.



Ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություն և հանդիպումներ

Հանրությունը գերադասում է մասնակցել ՏԻՄ-երի հետ հանդիպումներին այն ժամանակ, երբ ՏԻՄ ներկայացուցիչն է գնում իրենց հետ հանդիպման, այլ ոչ թե՝ հակառակը:

Օրինակ՝ ավագանու անդամի կողմից կատարված ընդունելություններին մասնակցել է հանրության 6%-ը, իսկ երբ ավագանու անդամն ինքն է գնացել համայնքի բնակիչների հետ հանդիպման, մասնակցել է հանրության 16%-ը:

Մասնակցություն ավագանու նիստերին

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

- **Հոդված 63.** Ավագանու հերթական նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները փակցվում են համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում, տարածվում զանգվածային լրատվության միջոցներով, տեղադրվում համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

- **Հոդված 16.** Համայնքի ավագանու նիստը հրապարակային է: Ավագանու կանոնակարգով նախատեսված դեպքերում ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող են անցկացվել դռնփակ նիստեր և քննարկումներ:

- **Հոդված 61.** Ավագանու նիստերն արձանագրվում են: Այդ արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում ենթակա են տեղադրման նաև համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

ՀՀ բոլոր համայնքներում ավագանու հրապարակային նիստերը առցանց հեռարձակվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

https://mtad.am/pages/publicity-transparency-local-self-governance-including-sessions-community-councils

Մասնակցություն ավագանու նիստերին

16-24 տարեկանների շրջանում բարձր է հատկապես իրենց խոսքը «լսելի չլինելու» հանգամանքը:
Այդ տարիքային խմբի 70%-ը նշել է, որ կմասնակցի ավագանու անդամի կողմից անցկացվող ընդունելություններին, եթե վստահություն ունենա, որ իր խոսքը կլսեն:

Ավագանու նիստ Գավառ համայնքում, լուսանկարը համայնքի պաշտոնական համացանցային էջից :

Հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ

Կազմակերպվում են համայնքի համար առավել կարևորություն ունեցող հարցերի և իրավական ակտերի նախագծերի (գլխավոր հատակագիծ, գոտիավորման և հողօգտագործման սխեմաներ, զարգացման ռազմավարություններ, ծրագրեր, բյուջեներ և այլն) պաշտոնական մթնոլորտում (ֆորմալ եղանակով) քննարկման նպատակով:

Առավել հաճախ քննարկման ենթակա թեմաներն են՝ (ըստ մասնակցության)

49% Համայնքի բնական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ քննարկում

36% Համայնքի տարեկան բյուջեի նախագծի քննարկում

38% Համայնքի հնգամյա զարգացման ծրագրերի քննարկում

29% Համայնքի տարեկան աշխատանքային պլանի քննարկում

Հանրային բաց լսումների և քննարկումների մասին տեղեկացված հանրության **79%**-ը չի մասնակցում դրանց:

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ 33%, ԿԱՆԱՅՔ՝ 16%, ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ՝ 13%

Հանրային բաց լսումներին և քննարկումներին մասնակցելուն նպաստող գործոնները

71% Եթե լսումներն ու քննարկումները վերաբերվեն անձամբ ինձ ու իմ ընտանիքի անդամներին

65% Վստահություն, որ իմ կողմից բարձրացրած հարցերը / խնդիրները լուծում կստանան

19% Եթե ընտանիքի անդամները թույլ տան

Հանրային ժողովներ և շահագրգիռ անձանց հետ հանդիպումներ

Անց են կացվում ոչ ֆորմալ (ոչ պաշտոնական) մթնոլորտում համայնքային որևէ հարցի կամ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրային կամ մասնակիցների կանխորոշված շրջանակի տեսակետների և կարծիքների արտահայտման համար հնարավորություն ստեղծելու նպատակով»:

Հանրային ժողովներին և շահագրգիռ անձանց հետ հանդիպումներին չմասնակցելու 4 հիմնական պատճառները

41% Տեղեկացված չեն կամ չեն լսել նման հանդիպումների մասին

22% Թեման չի հետաքրքրում

23% Ժամանակի խնդիր

9% Համայնքում նման ժողովներ չեն անցկացվում

Հարցումներ

Հարցումներն իրականացվում են համայնքային որևէ հարցի կամ իրավական ակտի նախագծի վերաբերյալ բնակիչների կարծիքն ու տեսակետը պարզելու նպատակով:

Հարցումներին չմասնակցելու 4 հիմնական պատճառները

54% Տեղեկացված չեն հարցումների անցկացման մասին

10% Համայնքում հարցումներ չեն անցկացվում

27% Ժամանակի խնդիր

7% Տարիքի ցածր լինելու պատճառով

Հանրության տեղեկացվածության աստիճանը հարցումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ 43% է, մասնակցությունը՝ 20%:

Կարճ հաղորդագրությունների միջոցով միկրոհարցումներ

ԲԿԳ-Հայաստան գործողությունների երկրորդ ծրագրի պարտավորությունները վերաբերում են

SMS հաղորդագրությունների միջոցով համայնքային միկրոհարցումների իրականացմանը, որը մասնակցայնության մեխանիզմներից է:

Համայնքային միկրոհարցումը համայնքի բնակիչների շրջանում
բջջային կարճ հաղորդագրությունների (sms) միջոցով կազմակերպվող հարցում է համայնքին հուզող խնդիրների վերաբերյալ:

ՄԱԶԾ աջակցությամբ SMS հարցում, Արենի համայնքում 2016թ.

Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններ

Համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող մարմին է, որի միջոցով ապահովվում է համայնքի բնակիչների մասնակցությունը համայնքի կառավարմանը և համայնքային խնդիրների լուծմանը:

ԽՄ-ին չեն կարող անդամակցել

- դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք
- հանցագործության համար դատապարտված անձինք, ովքեր իրենց պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկներում
- զինված ուժերի ժամկետային զինծառայողներ

ԽՄ-ին կարող են անդամակցել
համայնքի 16 տարին լրացած բնակիչները.

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 84.

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու 1-3 անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ):

Բնակիչների նախաձեռնություն

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված Հոդված 14.

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ նաև՝ համայնքում հաշվառված, 16 տարին լրացած անձանց ոչ պակաս, քան

- 1 տոկոսը՝ 10000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում,
- 2 տոկոսը՝ 1000-10000 բնակիչ ունեցող համայնքներում,
- 4 տոկոսը՝ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքներում:

Նախաձեռնությունը ներկայացվում և քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել օրենքով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական (նաև առաջին) քննարկումից առնվազն վեց ամիս հետո:

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնություններին չմասնակցելու գլխավոր պատճառը դրանց անցկացման մասին անտեղյակությունն է (46%):

Մասնակցային բյուջետավորում

- Ապահովվում է համայնքային բյուջեի կառավարման գործընթացում քննարկումների և քվեարկության միջոցով բնակչության մասնակցությունը որոշումների կայացմանը:

- Համայնքի բյուջեից հատկացվում է որոշակի գումար, որի շրջանակներում շահագրգիռ անձինք ներկայացնում են համայնքի հանրային խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ և սահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկներից՝ համայնքի բնակիչների քվեարկության արդյունքում ընտրված առաջարկներն իրականացվում են ՏԻՄ-երի կողմից:

- Առաջին անգամ պիլոտավորվել է 2023 թվականին Արմավիր, Արտաշատ, Աբովյան և Ջերմուկ համայնքներում:

Լուսանկարը Արմավիրի համայնքապետարանի էջից

Տեղական մակարդակում մասնակցային բյուջետավորման մոդելը

Գործընթացի իրականացման փուլերը՝

- Նախապատրաստական փուլ
- Իրազեկման փուլ
- Առաջարկների ներկայացման փուլ
- Առաջարկների նախնական գնահատման փուլ
- Քվեարկության փուլ
- Իրականացման փուլ
- Հաշվետվության փուլ



Լուսանկարը Աբովյան համայնքի պաշտոնական համացանցային էջից

Նախապատրաստական փուլ

- Համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու և իրականացնելու նպատակով յուրաքանչյուր տարի համայնքի ավագանին որոշում է կայացնում համայնքի հաջորդ տարվա բյուջեի ծախսային մասում որոշակի գումար հատկացնելու մասին:

- Որոշմամբ սահմանվում են հատկացվող գումարի չափը և օգտագործման նպատակը:

- Որոշմամբ կարող են սահմանվել մասնակցային բյուջետավորման գործընթացի մասնակիցների շրջանակը, նրանց ներկայացվող չափանիշները, առաջարկների ներկայացման տարածքային կամ թեմատիկ առաջնահերթությունները:

Քվեարկության փուլ

- Հանձնաժողովն ապահովում է քվեարկության փուլ անցած առաջարկների վերբեռնումը համայնքապետարանի պաշտոնական կայքում/բաժնում՝ քվեարկության համար:
- Քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային եղանակով՝ համայնքապետարանի պաշտոնական կայքերի/բաժինների միջոցով:
- Քվեարկելու իրավունք ունեն հարթակում գրանցված համայնքի բնակիչները:
- Քվեարկել հնարավոր է մինչև երեք առաջարկի օգտին:
- Կատարված քվեարկությունը հնարավոր չէ ձևափոխել կամ չեղարկել:
- Հանձնաժողովը քվեարկության այլընտրանքային տարբերակներ է ապահովում համայնքի բնակչության այն խմբերի համար, որոնք չունեն էլեկտրոնային կարգով քվեարկելու համար անհրաժեշտ գործիքակազմ կամ չեն տիրապետում դրանցից օգտվելու հմտություններին:
- Առավելագույն ձայներ հավաքած առաջարկը (առաջարկները) ճանաչվում է հաղթած:
- Հաղթած առաջարկների հեղինակները իրազեկվում են այդ մասին:

Մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի համաֆինանսավորում

ՀՀ կառավարության կողմից 2023թ. նոյեմբերի 2-ին ընդունվել է «ՀՀ համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1890-Ն որոշումը:

Մասնակցային բյուջետավորման գործընթացների ներդրումը հնարավորություն է տալիս համայնքներում խթանել բնակչության անմիջական մասնակցությունը բյուջետային գործընթացներին՝ մեծացնելով հանրային ռեսուրսների բաշխման հասցեականությունը և արդյունավետությունը:

Համայնքի պաշտոնական համացանցային կայք

Համայնքը, անկախ բնակչության քանակից, պետք է ունենա պաշտոնական համացանցային կայք, որի ստեղծումն ու վարումն ապահովում է համայնքի ղեկավարը:
Ավագանու հրապարակային նիստերը առցանց հեռարձակվում են համայնքային պաշտոնական համացանցային կայքում

2015 թ. հոկտեմբերի 28-ին Մեքսիկայի Միացյալ Նահանգների Մեխիկո քաղաքում «Բաց կառավարման գործընկերություն» (OGP) նախաձեռնության գլոբալ համաժողովի մրցանակաբաշխությանը ՀՀ – կողմից ներկայացվել է «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում և ներդրում ՀՀ համայնքապետարաններում» նախաձեռնությունը, որն արժանացել է բարձր մրցանակի՝ զբաղեցնելով տարածաշրջանում (Ասիա-Խաղաղօվկիանոսի) առաջին տեղը:

Համայնքի պաշտոնական համացանցային կայք

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Հոդված 11.

«Համայնքը, անկախ բնակչության քանակից, պետք է ունենա պաշտոնական համացանցային կայք, որի ստեղծումն ու վարումն ապահովում է համայնքի ղեկավարը՝ սույն օրենքով և համայնքի ավագանու սահմանած կարգով:»

Համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առնվազն պետք է առկա լինեն՝

- ՏԻՄ-երի ընդհանուր գործունեության վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունը,
- ՏԻՄ-երի ընդունած նորմատիվ իրավական ակտերը, նորմատիվ իրավական ակտերի նախագծերը,
- համայնքի կարևորագույն փաստաթղթերը և դրանց վերաբերյալ հաշվետվությունները,
- նախատեսվելիք ավագանու նիստի օրակարգի նախագիծը, նիստի անցկացման վայրը և ժամանակը, արդեն անցկացված ավագանու նիստի արձանագրությունը,
- համայնքում բնակիչների հետ հանդիպումների, հանրային լսումների և քննարկումների նյութերը, ընթացակարգը, անցկացման վայրը և ժամը, դրանց իրականացման արդյունքները,
- և այլն:



ՈՉ ՖՈՐՄԱԼ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ (հաջողված օրինակներ)

1. ՏԻՄ-երի որոշումների մասին բլոգ (Գավառ)
2. Տեքստային հաղորդագրությունների միջոցով բնակիչների պարտավորությունների մասին հիշեցում (Երևան, Քասախ)
3. Մասնակցային հետազոտություն (Ախթալա)
4. Երկխոսության այգի (Սիսիան)
5. Սուրճի սեղանի շուրջ համայնքային հարցերի քննարկում (Մեղրի)
6. Թաղամասերի ներկայացուցիչների կոմիտե (Աշտարակ),
7. Դարձիր համայնքապետ (Նոր Երզնկա)

ՄԱԶԾ աջակցությամբ SMS հարցում, Արենի համայնքում 2016թ.

ՈՉ ՖՈՐՄԱԼ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ (հաջողված օրինակներ)

- B’Comm-ը բջջային հարթակ է Եղեգնաձորի համայնքի երտասարդության և տեղական իշխանությունների (հատկապես ավագանու անդամների) հետ կապ հաստատելու և նրանց համայնքի որոշումների կայացման գործընթացներում ներգրավելու համար (ՄԱԶԾ-ի ֆինանսավորմամբ)

- Նոր Երզնկայի(այժմ Աշտարակ) համայնքապետն ամեն տարի մեկ օր հրավիրում է ավագ դպրոցի աշակերտներին դառնալ համայնքապետ և համայնքապետարանի աշխատակից՝ ավելի լավ հասկանալու ՏԻՄ-ի դերը և գործառույթները, ինչպես նաև բարձրացնելու համայնքին վերաբերող հարցեր և օրվա վերջում քննարկելու լուծումները համայնքապետի հետ:

Օգտակար հղումներ

Համայնքի ավագանուն ՀՀ սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով՝ վերապահված լիազորություններին կարող եք առավել մանրամասն ծանոթանալ՝

Աղբյուրի անվանումը	Անցնելով հղմամբ՝	Սկանավորելով QR կոդը
ՀՀ հողային օրենսգիրք	համակարգում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172330	
«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք	Հասանելի է ՀՀ իրավական ակտերի տեղեկատվական համակարգում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187311	
«Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենք	Հասանելի է ՀՀ իրավական ակտերի տեղեկատվական համակարգում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193167	
«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք	համակարգում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189250	
«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք	համակարգում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190370	
ՀՀ ՏԿԵՆ հեռավար ուսուցման համակարգում զետեղված դասընթաց	https://elearning.mta.gov.am/course/view.php?id=37	
ՀՀ ՏԿԵՆ կայք էջում զետեղված նյութեր	https://mtad.am/pages/publicity-transparency-local-self-governance-including-sessions-community-councils	

Norwegian Ministry
of Foreign Affairs

ՀՀ տարածքային կառավարման եւ
ենթակառուցվածքների նախարարություն

UNDP

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

«Դիմակայունություն բոլորի համար» ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ, Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ: